ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Արտահերթ 5

22 սեպտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:

Բացակա էին՝ Գեվորգ Ղուկասյանը, Էմմա Բարսեղյանը, Շավարշ Արամյանը, Լուսինե Նազարյանը, Սվետլանա Ադամյանը, Ռուբեն Մխիթարյանը, Վահե Կիրակոսյանը, Սուսաննա Մոսոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

ՀԼՄ ներկայացուցիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Ղուկասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը:

Նախապես համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված օրակարգի 1-ին հարցը՝ 1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, հեղինակի կողմից հանվեց օրակարգից և չդրվեց քվեարկության:

Համայնքի ղեկավար Վ.Ղուկասյանը հայտարարեց, որ «Գյումրու օր» ամենամյա տոնակատարության միջոցառումների անցկացման համար բարերար է հայտնվել, որը կհովանավորի բոլոր ծախսերը՝ ավելի մեծ ֆինանսական ներդրում կատարելով, իսկ նախատեսված գումարը կուղղվի համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների խնդիրների լուծմանը:

Ելույթ ունեցավ Կարեն Սիմոնյանը՝ անդրադարձ կատարելով անցած նիստին քննարկված հարցին:

Հնչեցին այլ ելույթներ, կարծիքներ ու առաջարկություններ:

Լիզա Գասպարյանն առաջարկեց տնտեսված 15 միլիոն դրամի չափով գումարն ուղղել Գծի հետևի «Էյլիթիա» մանկապարտեզի խնդիրների լուծմանը:

Համայնքի ղեկավարն էլ տեղեկացրեց, որ գումարները կուղղվեն ամենավատ վիճակում գտնվող մանկապարտեզին կամ սպորտդպրոցին:

ԼՍԵՑԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԾՎԻԿ ՏԱՇՉՅԱՆ
համազեկուցող Ն.ՍԱՐԳՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» և «Ա.Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 թվականի սեպտեմբերի 17-ինN 14013 ևN 14051 թվագրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում** է.

1.«Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որպես նվիրատվություն հատկացնել 796 000 /յոթ հարյուր իննսունվեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ ընթացիկ վերանորոգման համար շինարարական նյութերի ձեռքբերմ նպատակով:
2. «Ա.Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 768480(յոթ հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ընթացիք վերանորոգման համար շինարարական նյութերի ձեռքբերմաննպատակով:
3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման1-ին և 2-րդ կետերում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի ՀանրապետությանՇիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններայլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝օրենքով սահմանված կարգով:

4.Սույն որոշումն ուժի մեջ է որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Լ.Գ. ԱՆԱՆՅԱՆ

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ

Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ք. Գյումրի
2025թ. սեպտեմբերի 22